6. Այդ և դրանց հետ առնչվող հարակից հարցերը լուծելու համար անհրաժեշտ է ռեգիոնալ ատլասները ստեղծող հիմնարկությունների ու մասնագետների ավելի սերտ համագործակցություն և աշխատանքների կոորդինացիա՝ ՍՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի գլխավորությամբ:

Է.Տ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԼԽԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՆԱԳՌՑՆ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

1. Անցյալ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբներին Արևելյան Հայաստանի ընտարածքում հավաքված է կանանց գլխի հարդարանքի հինգ համալիր. դրանցից չորսն ունի ավանդութային բնույթ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է որոշակի ազգագրական խմբի:

2. Համալիրները գլխի հարդարանքի զանազան տիպերի համամասնությամբ լինելով տարբեր, ըստ կրելու եղանակի, նաև սանրվածքի, ունեն երկու պարտադիր տարր՝ կոպի և գլխաշոր:

3. Զանազան կարգի պատմական հուշարձանների և ազգագրական նյութերի տվյալների հիման վրա փորձ է արվում հետևելու գլխի հարդարանքի այդ երկու տիպի կենցաղավարման պատմությանը, ինչպես և հայերի մեջ դրանց տարածվածությանը տակավին վաղ միջնադարից:

4. Հնագիտական հուշարձանները հնարավորություն են ընձեռում բացահայտելու մեզ հետաքրքրող գլխի հարդարանքի նախատիպերի գոյությունը Հայկական բարձրավանդակում և սահմանամերձ ընտարածքներում՝ հայ ժողովրդի կազմավորումից դեռ շատ առաջ:

5. Շատ ժողովուրդների հայտնի կոպիների և գլխաշորերի հնագույն նմուշների բացահայտումը թվում է, թե ուշագրավ կարող է լինել գլխի հարդարանքի այդ տիպի ծագման հարցը լուծելու առումով:

Ա.Ա.ՕՌԱԲԱՇՅԱՆ
ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ուխտագնացության սովորությունը հայտնի է աշխարհի շատ ժողովուրդների, մասնավորապես արևելյան: